



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Սյասնիկյան 55 (+374 268) 2-25-85  
dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 սեպտեմբերի 2012թվականի N 434-Ա

**ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 396-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ի լրումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. սեպտեմբերի 12-ի «Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 1432-0001 ծածկագրով հողամասի մի մասի /2594.0քմ հողամասի/ նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու մասին» թիվ 396-Ա որոշման և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. սեպտեմբերի 12-ի «Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 1432-0001 ծածկագրով հողամասի մի մասի /2594.0քմ հողամասի/ նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու մասին» թիվ 396-Ա որոշման մեջ կատարել լրացում՝ մասնավորապես, 2594.0քմ հողամասին տրամադրել պայմանական հասցե՝ Գետափնյա աջ փողոց թիվ 11:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ

ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ



2012 թ. սեպտեմբերի 27  
ք. Դիլիջան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85  
dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 սեպտեմբերի 2012թվականի N 435-Ս

**ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի «ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՑԱ  
ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 106 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ԹԻՎ 31 ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 8-ի թիվ 31 որոշման կայացման գործընթացում սխալմամբ հիմք է ընդունվել 1180.0քմ ըստ քարտեզագրման հողամասի չափը, նախկինում հատկացված 360.0քմ-ի փոխարեն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝


**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 8-ի թիվ 31 որոշման ենթատեքստի երկրորդ պարբերության մեջ գրված «ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի» փոխարեն կարդալ «ըստ քարտեզագրման սովյալների»: Նույն պարբերության 2-րդ նախադասության մեջ գրված «կազմում է 1141.0քմ»-ից հետո լրացնել «որից 360.0քմ հողամասի նկատմամբ տնատիրությունն ունի սեփականության իրավունք: Հանձնաժողովն առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին՝ փաստացի ավել օգտագործվող 781.0քմ-ից 72.0քմ-ի (360 X 20%) նկատմամբ ճանաչել տնատիրության սեփականության իրավունքը, իսկ 709.0քմ (781.0քմ-72.0քմ) հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել սեփականատերերին կադաստրային արժեքի 30%-ի չափով, որը կազմում է 407108 Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 8-ի թիվ 31 որոշման 2-րդ կետում լրացնել 3-րդ ենթակետ.

«Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողի արժեքը՝ 407108 Հայաստանի Հանրապետության դրամ /հաշվարկված է հողամասի կադաստրային արժեքի 30%-ի չափով/, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:»

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ



*(Handwritten signature)*

ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 27  
ք. Դիլիջան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85  
dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 սեպտեմբերի 2012թվականի N 436-Ս

**ԴԻԼԻՋԱՆԻ ՎԱՍԻԼԵՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 48/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՊՏՈՒՂ-  
ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ  
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին  
2011թ. մարտի 1-ի Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից՝


**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. սեպտեմբերի 14-ի թիվ 12/Թ-27 շինարարության  
թույլտվությամբ Դիլիջանի Վասիլևի փողոց թիվ 48/5 հասցեում կառուցվող պտուղ-  
բանջարեղենի սառնարանային պահպանության շենքի զբաղեցրած 150.0քմ հողամասի  
նպատակային նշանակությունը համարել փոփոխված:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝**

**ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ**

2012 թ. սեպտեմբերի 27  
ք.Դիլիջան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85  
dilibjan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 սեպտեմբերի 2012թվականի N 437-Ս

**ՔԱՂ. ԵՐՎԱՆԴ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 56/3 ՀԱՍՑԵԻ  
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքապետարան է դիմել քաղ. Երվանդ Հովակիմյանը՝ Աբովյան փողոցի թիվ 50բ հասցեում, իր կողմից կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Աբովյան փողոցի թիվ 50բ հասցեում քաղ. Երվանդ Հովակիմյանի կողմից կառուցվել է բնակելի տուն դեռևս 1990-ական թվականներին /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 162.0քմ հողամաս, որի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝


**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղ. Երվանդ Հովակիմյանի կողմից, Աբովյան փողոցի թիվ 50բ հասցեում կառուցված բնակելի տանը և 162.0քմ հողամասին տրամադրել հասցե՝ Աբովյան փողոց թիվ 56/3:
2. Աբովյան փողոցի թիվ 56/3 հասցեի բնակելի տունը և 162.0քմ հողամասը համարել քաղ. Երվանդ Սուրենի Հովակիմյանի /ծնված 27.11.1964թ./ սեփականությունը:
3. Պարտավորեցնել քաղ. Երվանդ Հովակիմյանին.
  - 1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ

սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ



*(Handwritten signature)*

ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 27  
ք. Դիլիջան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85  
dilibjan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 սեպտեմբերի 2012թվականի N 438-Ս

**ՔԱՂ. ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 56/4 ՀԱՍՑԵԻ  
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքապետարան է դիմել քաղ. Լենա Հովհաննիսյանը՝ Աբովյան փողոցի թիվ 58 հասցեին հարակից տարածքում, իր կողմից կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Աբովյան փողոցի թիվ 58 հասցեին հարակից տարածքում քաղ. Լենա Հովհաննիսյանի կողմից կառուցվել է բնակելի տուն և օժանդակ շինություններ դեռևս 1980-ական թվականներին /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան և օժանդակ շինությունների տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 400.0քմ հողամաս, որի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**


1. Քաղ. Լենա Հովհաննիսյանի կողմից, Աբովյան փողոցի թիվ 58 հասցեին հարակից տարածքում կառուցված բնակելի տանը և 400.0քմ հողամասին տրամադրել հասցե՝ Աբովյան փողոց թիվ 56/4:
2. Աբովյան փողոցի թիվ 56/4 հասցեի բնակելի տունը, օժանդակ շինությունները և 400.0քմ հողամասը համարել քաղ. Լենա Ղահրամանի Հովհաննիսյանի /ծնված 19.02.1953թ./ սեփականությունը:

3. Պարտավորեցնել քաղ. Լենա Հովհաննիսյանին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝



ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 27  
ք. Դիլիջան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՂԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85  
dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 սեպտեմբերի 2012թվականի N 439-Ա

**ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Քաղաքապետարան է դիմել քաղ. Իրինա Լյուքսեմի Ավագյանը, իր կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով: Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2012 թ. սեպտեմբերի 14-ի նիստում և 211-Ա որոշմամբ բավարարվել:


Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 4 շենքի թիվ 17, մեկ սենյականոց՝ 38.12ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն ուղղակի վաճառքի ձևով, 57180(հիսունյոթ հազար հարյուր ութսուն) դրամ արժեքով, օտարել Իրինա Լյուքսեմի Ավագյանին՝ որպես սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԷ Ժ/Պ՝

ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ



2012 թ. սեպտեմբերի 27  
ք. Դիլիջան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85  
dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 սեպտեմբերի 2012թվականի N 440-Ա

**ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Քաղաքապետարան է դիմել քաղ. Ֆերդինանտ Ավետիկի Շեկոյանը, իր ընտանիքի կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով: Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2012 թ. սեպտեմբերի 14-ի նիստում և 212-Ա որոշմամբ բավարարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի թիվ 171 շենքի թիվ 10, երեք սենյականոց՝ 75.88ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն ուղղակի վաճառքի ձևով, 113820(հարյուր տասներեք հազար ութ հարյուր քսան) դրամ արժեքով, օտարել Ֆերդինանտ Ավետիկի Շեկոյանին՝ որպես սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝

ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ



2012 թ. սեպտեմբերի 27  
ք. Դիլիջան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85  
dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 սեպտեմբերի 2012թվականի N 441-Ս

**ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 2000.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱՂԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2000.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու վերաբերյալ՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, մակերեսով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:


Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Կից աղյուսակում ներկայացված Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2000.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝

ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ




2012 թ. սեպտեմբերի 27  
ք. Դիլիջան

Աղյուսակ.

Գլխիցանի բաղադրային համայնքի ղեկավարի 2012թ. սեպտեմբերի 27-ի թիվ 27/Գ-12/ որոշման

Գլխիցանի բաղադրային համայնքի սեփականությունը իսկադրողներին հատուցողության իրավունքի միջոցով										
Հ/Ի	Լստ	Գտնվելու վայրը	Մոնիթորինգ	Մակերեսը /թմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Հողամտի տրամադրման ժամկետը	Կառուցողական իրավունքի տարեկան վճարի մեկնարկային ցին	Մահմանափակումներ
1	Լստ 11/ԲԳ-12/	Կամու 207/3	0638-0002	2 000,0	Բնակավայրերի հող	Խոսարակական կառուցողական	Խոսարակական նշանակություն օբյեկտի կառուցման	40 տարի	70000 դրամ	չկան



Գլխիցանի բաղադրային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար *Մ. Մանուկյան* Ա. Մարտիրոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք  
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85  
dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 սեպտեմբերի 2012թվականի N 442-Ա

**ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ  
«ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 6869.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 7 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ  
ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 6869.0քմ ընդհանուր մակերեսով թվով 7 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու վերաբերյալ՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝


**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Կից աղյուսակում ներկայացված, Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 6869.0քմ ընդհանուր մակերեսով թվով 7 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու և դրանց մեկնարկային գները հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝

*(Ստորագրություն)*

ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ



2012 թ. սեպտեմբերի 27  
ք.Դիլիջան

Արդյունակ.

ՀՀ Դիվիզանի բարդաբալին համայնքի ղեկավարի 2012թ. սեպտեմբերի 27-ի թիվ 442 որոշման

Դիվիզանի բարդաբալին համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի աճուրդ-վաճառք

Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկաճիտ	Մակերեսը /քմ/	Նախնական նշանակությունը	Գործարանական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Մեկնարկային գին	Մահանափակումներ
1	Լոտ 41/ՔՀ-12/	Հակոբջանյան 95	0258-0036	48,0	Բնակավայրերի հող	Բնակելի կառուցապատման	ավտոտնակի կառուցման	120 000	չկան
2	Լոտ 42/ՔՀ-12/	Գետափեյա 7/11	0158-0035	5 590,0	Բնակավայրերի հող	Բնակելի կառուցապատման	բնակելի կառուցապատման	22 360 000	չկան
3	Լոտ 43/ՔՀ-12/	Թբլիսյան խճուղի 7/1	0045-0028	60,0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման	150 000	չկան
4	Լոտ 44/ՔՀ-12/	Մոլորովական 14/1	0072-0067	100,0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	բնակելի կառուցապատման	250 000	չկան
5	Լոտ 45/ՔՀ-12/	Մոլորովական 14/2	0072-0066	100,0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման	250 000	չկան
6	Լոտ 46/ՔՀ-12/	Շամախյան 3ա/15	0067-0095	221,0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	բնակելի կառուցապատման	552 500	չկան
7	Լոտ 47/ՔՀ-12/	Տ.Պետրոսյան 3-րդ կրթ. 24	0610-0278	750,0	Բնակավայրերի հող	այլ հողեր	անհատական բնակելի տան կառուցման	1 875 000	չկան

Դիվիզանի բարդաբալին համայնքի ղեկավարի աշխատակազմի բարձրագույն

*[Ստորագրություն]*

Ա. Մարտիրոսյան